Էմմավուսի ճանապարհին

Զատկից հետ երկու ճամփորդ գնում էին պաղեստինյան փոշոտ ճանապարհով, գնում էին շտապ, հիմնականում լուր, իրար անգամ չնայելով, գնում էին այնպես, կարծես թե հստակ նպատակետ չունեին, ուղղակի որպեսզի հնարավորինս հեռանան Սուրբ քաղաքից, որտեղ գարնանային առաջին որոտի ճայթմունքների հետ մեկտեղ քանդվեցին նրանց ամբողջ կյանքի սպասելիքները, և այլևս ունայն էր ամեն բան…

Հուսաբեկ ուղևորների համար անտանելի էր դարձել և շոքը և փոշին, ավելի անտանելի էր լռությունը, որը թաքցրած հանցանքի պես ներսից հոշոտում էր երիտասարդերի հուսակոտոր հոգիները: Վերջապես մեկը պատռեց ճնշող լռության միջնորմը.

-Չէ՞ որ այդ ամենը բոլորի աչքերի առաջ էր կատարվում: Նա նրանց և նրանց որդիներին էր բուժում, նրանց աչքերի առաջ մեռյալներին հարություն էր տալիս, այդ նույն երեկվա բժշկվածները չէ՞ին, որ խառնվելով կույր ամբոխին աղաղակում էին «խա՛չը, խա՛չը հանիր Նրան…» երիտասարդը այլևս անկարող էր զսպել իրեն, հորդահոս արտասուքներին միախառնված խեղդող հեգությունը լրեցրեց նրան, նա անմռունչ հեկեկում էր՝ հենված մի մեծ քարին, որը իր համար միակ ապավենն էր թվում ամբողջ աշխարհում: Եղբայրը անխոս գրկեց իրեն, նա փորձում էր մխիթարության խոսք գտնել, սակայն ինքն էլ ավելի կարոտ էր մխիթարության:

- Իսկ մենք, մենք… էլ ինչի համար ապրենք, եթե առաջին նեղությունից ցրվեցինք, փախանք Սուրբ քաղաքից, մեր վախն էր դարձել մեր առաջնորդը, և այժմ ինչ է մեզ սպասում, ի՞նչ հույսով ենք գնում, ասա՛ ինձ,- չէր հանգստանում երիտասարդ Կղեոպասը:

-Գիտեմ, գիտեմ և կիսում եմ քո ցավը, - ցավով ասաց ավագ ընկերը, - սակայն հիմա դեռ հուսահատվելու ժամանակը չէ, ես զգում եմ որ դա դեռ վերջը չէ, Կղեոպա՛ս, չգիտեմ ինչպես դա բացատրեմ քեզ բայց հաստատ վերջը չէ, այլ մի նոր սկիզբ, ուղղակի չգիտեմ թե ինչից պետք է սկսենք և ինչ պետք է անենք…

- Լավ դե, մի խաբի զոնե ինքդ քեզ, քո աչքերի առաջ Նրան թաղեցին, քո աչքերի առաջ ցրվեցին անգամ ամենամոտ աշակերտները, ո՞ւր են նրանք, ո՞ւր է Իր արքայությունը, որին այդքան փափագում էինք, որով արդեն իսկ ապրում էինք…

Նրանց խոսակցությունը ընդհանեց մեկ այլ ճամփորդի հայտնվելը

-Ինչի՞ մասին եք վիճում, եղբայրներ, ինչի՞ց եք տրտմած, - մեղմ ձայնով հարցրեց Նա

Երիտասարդ Կղեոպասը հազիվ էր զսպում իր բորբոքված սիրտը. «սա ո՞վ է, որ այդքան անհոգ է ապրում, միթե ինքն էլ անտարբեր է նայում արդարի մահվանը»- մտածում էր նա

-Միայն դու ես երևի ամբողջ Երուսաղեմում որ չգիտես, թե ինչպես մեր ժողովուրդը ձեռքը բարձրացրեց Աստծու մարդու վրա և սպանեց արդարին, չե՞ս իմանում, թե ինչ եղավ:

Նա հուզմունքով պատմում էր ճամփորդին Նազորվրեցի Հիսուսի մասին, այս անգամ էլ չկարողանալով զսպել իր վրդովմունքը, իսկ Նա լսում էր, ուշադիր և առաջվա պես անհոգ, Նրա խաղաղ, իմաստուն հայացքը չափազանց խորն էր, այնպես որ ուղևորները ակամայից սկսեցին սթափ մտածել, կշռադատել խոսքերը, Նրա ներկայությունից իրենք ավելի ու ավելի էին ուշքի գալիս սարսափելի դեպքերից հետո, սկսում էին նորից զգալ կյանքը: Ապա Նա սկսեց մեջբերել գրվածքները՝ Մովսեսից սկսյալ, մարգարեներով բացատրում էր, թե Մեսիան, փրկիչը պետք է տանջվեր Իր ժողովրդի համար, ինչպես և Եսային է ասում, պետք է մեռներ և հարություն առներ, ըստ գրվածքների

- Այդքան անմիտ ու թուլասիրտ եք, - հայրաբար հանդիմանում էր Նա, - դեռ չե՞ք հասկանում որ արքայության փառքին միայն խաչի միջոցով կարելի է հասնել, չէ որ Մեսիան պետք է մահանար ու է հարություն առներ, չեք հիշում ասվածը «Ո՞ւր է մահ քո խայթոցը, ու՞ր է քո հաղթանակը շեոլ,»- մի տեսակ բերկրանքով բացականչեց Նա:

- Այո, հենց հարության մասին էին խոսում կանայք, դա էլ ենք լսել, բայց, ինչպես է դա հնարավոր…-իրար ապշահար նայելով հարցնում էին երիտասարդները:

Ուղևորների ճանապարհը արդեն թեքվում էր դեպի Էմմավուս, իսկ Նրա ճանապարհը ուղիղ էր, սակայն ընկերները շատ խնդրեցին որ գա իրենց հետ. օրը արդեն տարաժամում էր և նրանք օթևանի կարիք ունեին: Երիտասարների սրտերը ճմլվում էին մի անբացատրելի գարնանային եռանդով, նրանք մտան օթևանելու, ընթացքում շատ հարցեր էին տալիս Մեսիայի մասին և ամեն մի պատասխանով էլ ավելի էր բորբոքվում նրանց սրտերի հուրը, նրանք արդեն գրեթե լիահույս էին նոր կյանքով, սակայն այդպես էլ չգիտեին թե ինչպես պետք սկսվի այն: Մեղան նստելիս Նա սկսեց

օրհնաբանության աղոթքը - « Շնորհակալ եմ Քեզ, Հայր որ քո օրհնություններով ես լցնում մեր կյանքը, որ տվեցիր մեզ այս հացը, որպեսի մենք միասին լինենք Քո օրհնությամբ ու Քո սիրով…» Նա բեկեց հացը և տվեց սովատանջ ընկերներին։

- Բայց… սա Դու ես, ոնց մենք չճանաչեցինք Քեզ, Հիսուս…

Այդ խոսքերի վրա Նա աներևույթ դարձավ իրենց աչքերին։ Սակայն նրանք դեռ զգում էին Իր քաղցր ներկայությունը, ճշմարտության հուրը դեռ ճմլում էր նրանց սրտերը։ Մնացին նրանք ու բեկված հացը, որով ճանաչեցին Հարուցյալին, Որի մասին վկայելու համար պետք է շտապեին Երուսաղեմ՝ նորից ապրելու, նորովի սկսելու իրենց առաքելությունը։

Գյուղական խղճուկ տնակ, մշուշոտ լապտերի առկայծող լույսի ներքո գողտրիկ տեսարան. ***մարդիկ,*** որոնք դարձան հարության վկաներ ամբողջ Երուսաղեմում, սիրո ***հուր***, որով բորբոքվեց ամբողջ աշխարհը՝ լուսավորելով մարդկությունը գալիք արքայության անստվեր լույսով, ***հաց***, որով աներևութապես միշտ ներկա է Նա, Ում մեկ անգամ հանդիպելով Էմմավուսի ճամփին չենք դադարում վկայել համայն աշխարհին, գոչելով «***Քրիստոս հարյալ ի մեռելոց, ձեզ և մեզ մեծ ավետիս…»***